Հավելված
Ագարակի քաղաքապետի
2013թ. հունիսի 28-ի թիվ 136-Ա որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակի քաղաքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) համայնքային ծառայության գլխավոր մասնագետի /ծածկագիրը 2.3-1 / թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակի քաղաքային համայնքի /այսուհետ՝ Համայնք/ ղեկավարը հայտարարում է մրցույթ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Ագարակի քաղաքապետարանի աշխատակազմի /այսուհետ՝ Աշխատակազմ/ համայնքային ծառայության գլխավոր մասնագետի /ծածկագիրը 2.3-1 / թափուր պաշտոնն զբաղեցնելու համար :

1. Նշված պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթները՝

ա)Աշխատակազմում իրականացնում է ՀՀ օրենքով գլխավոր ֆինանսիստին վերապահված լիազորությունները,

բ)կազմում է համայնքի բյուջեի և դրանում առաջարկվող փոփոխությունների նախագծերը, կազմում է բյուջեի կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի ամսական, եռամսյա հաղորդումների և տարեկան հաշվետվության նախագծերը, մասնակցում է բյուջեի կատարման վերլուծության, ամփոփման և համապատասխան առաջարկությունների ներկայացման աշխատանքներին, ինչպես նաև բյուջեի կատարման համար անհրաժեշտ աշխատանքներին,

գ)համայնքի ղեկավարի աշխատակազմում և համայնքային ենթակայության հիմնարկ-կազմակերպություններում մասնակցում է ֆինանսական վերահսկողության համար անհրաժեշտ աշխատանքներին, կազմում համապատասխան նյութեր և մասնակցում է նրանց կողմից իրականացվող ֆինանսական բնույթի գործառույթների ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանությունը գնահատելու համար անհրաժեշտ աշխատանքներին,

ե)մասնակցում է ԲԳԿ-ների (բյուջետային գործընթացի կարգադրիչներ) կողմից օգտագործվող կամ վերջիններիս կողմից տրամադրվող ֆինանսատնտեսական բնույթի տեղեկատվության արժանահավատության ու ճշտության գնահատման, անճշտությունների բացահայտման աշխատանքներին,

զ)բյուջեի նախագծի նախապատրաստման և կազմման աշխատանքների իրականացման ժամանակ համայնքային ենթակայության հիմնարկներին ցույց է տալիս մեթոդական օգնություն,

է)սահմանված կարգով կազմում է ֆինանսական ոլորտին վերաբերող ծրագրային փաստաթղթեր, հաշվետվություններ, պետական մարմինների, իրավաբանական և ֆիզիկական անձանց գրությունների նախագծեր, կազմում է համայնքի զարգացման ծրագրի համապատասխան ոլորտի նախագիծը,

ը)մասնակցում է համայնքային ծրագրերի իրականացմանն ուղղված ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների որոնման, այդ նպատակով բանակցությունների վարման և համագործակցության աշխատանքներին,

2. Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական

կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության, պետական և (կամ) համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ,

բ) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Ֆինանսական համահարթեցման մասին», «Եկամտային հարկի մասին», «Գնումների մասին», «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերի, Աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

գ) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

դ)ռուսերենի (ազատ) կամ մեկ այլ օտար (կարդում, կարողանում է բացատրվել) լեզվի իմացություն:

Մրցույթը կանցկացվի 2013թ-ի օգոստոսի 6-ին ժամը 11:00-ին, Ագարակի քաղաքապետարանի շենքում /ք. Ագարակ, Գարեգին Նժդեհ 5/:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիները և ՀՀ փախստականի կարգավիճակ ունեցող անձինք /այսուհետ՝ քաղաքացիներ/:

Դիմող քաղաքացիները Ագարակի քաղաքապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

ա)դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/ ,

բ) տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի դիպլոմի/ների/, վկայականի/ների/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

գ) արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակների հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,

դ) մեկ լուսանկար՝ 3X4 սմ չափսի,

ե) անձնագրի պատճենը:

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիրը:

Քաղաքացիները մրցույթին ներկայացնում են անձնագրի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք նաև՝ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 9:00 – 18:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերին: Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 16 -ը հուլիսի 2013թ մինչև ժամը 18:00-ն:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Ագարակի քաղաքապետարանի աշխատակազմ /ք. Ագարակ, Գարեգին Նժդեհ 5, հեռ. 02862 23-50, 02862-25-67/ և ՀՀ Սյունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչություն /ք. Կապան, Գ. Նժդեհի 1, հեռ. 2-35-50/:

/ՔԱՂԱՔԱՊԵՏ Մ. ՉԱՔԱՐՅԱՆ